# ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ԱՐՄԱՎԻՐԻ ԹԵՄԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Արմավիրի թեմում ապրիլ-հուլիս ամիսներին թեմակալ առաջնորդ Տ. Սիոն եպս. Ադամյանի օրհնությամբ տեղի ունեցան դասախոսություններ «Ս. Գրքի ուսումնասիրությունը» թեմայով՝ Էջմիածնի և հարակից գյուղերի հանրակրթական դպրոցների 55 ուսուցիչների համար, ովքեր արդեն մեկ տարի է, ինչ «Հայ Եկեղեցու պատմություն» են դասավանդում դպրոցներում: Դասախոսությունները կազմակերպվել էին Արմավիրի թեմի ու Հայաստանի Աստվածաշնչային ընկերության նախաձեռնությամբ՝ ուսուցիչների կրոնական գիտելիքներն առավել ամրապնդելու, նրանց հոգևոր նոր լիցք հաղորդելու նպատակով:

Դասախոսություններով հանդես եկան Աստվածաշնչային ընկերության ծրագրերի տնօրեն Արշավիր Գաբուջյանը, Մխիթարյան միաբանությունից Սերովբե վրդ. Չամուռյանը, Երևանի պետական համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի դասախոս Գևորգ սարկավագ Ղուշչյանը, վերապատվելի Մանվել Ջինբաշյանը:

Հուլիսի 15-ին թեմակալ առաջնորդը մեծ հանդիսավորությամբ դասընթացների մասնակիցներին հանձնեց վկայականներ՝ իր օրհնությունը տալով մատաղ սերնդի քրիստոնեաբարոյական դաստիարակությամբ զբաղվող ուսուցիչներին:

Դասախոսություններն ավարտվեցին հիշարժան ուխտագնացությամբ՝ դեպի Հաղպատի և Սանահինի հռչակավոր վանքերը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*